ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2019 թ. մարտի 17-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 6ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Մարջիկ Վարդանյան և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ՝ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

1.Աշակերտների առաջադիմության հարցը:

2. Էքսկուրսիայի կազմակերպում:

3. Ընթացիկ հարցեր /կարգապահություն,ռեժիմ,հերթապահություն/:

1.Լսեցին.- *Աշակերտների առաջադիմության հարցը:*

Ելույթ ունեցավ դասղեկ Մարջիկ Վարդանյանը՝ ներկայացնելով յուրաքանչյուր աշակերտի առաջադիմությունը: Մանրամասնորեն ներկայացվեց յուրաքանչյուր աշակերտի գրավոր և բանավոր խոսքը:

Ծնողներին անհատական ներկայացվեց իրենց երեխաների բացթողումներն ու թերացումները:

Որոշեցին

Ավելի հետևողական լինել բարձր առաջադիմություն ապահովվելու համար: Այն ծնողները, որոնց երեխաները ունեն որոշակի թերացումներ, որոշեցին ավելի շատ համագործակցել ուսուցիչների հետ, տանը ավելի շատ աշխատել երեխաների հետ, որպեսզի վերացնեն բացթողումները: Կարդալ և գրել դժվարացող աշակերտների ծնողներն էլ խոստացան ավելի ուշադիր լինել իրենց երեխաներին, դժվարության դեպքում փորձել ուսուցիչների հետ միասին կարգավորել ցանկացած հարց կապված դասերի հետ:

2.Լսեցին.- *Էքսկուրսիայի կազմակերպման հարցը:*

Ելույթ ունեցավ դասղեկ Մ. Վարդանյանը: Նա նշեց, որ ՀՀ ԿԳ նախարարության կողմից դպրոցականներին տրամադրվել են թանգարան այցելության անվճար տոմսեր, որոնք նպատակահարմար կլինի օգտագործել էքսկուրսիայի ընթացքում՝ զուգակցելով կինոդիտումը թանգարան այցելության հետ: Ծնողներից առաջարկեցին աշակերտներին տանել նաև մանկական սրճարան:

Որոշեցին.
Առաջարկը բոլոր ծնողների կողմից հավանության արժանացավ: Ծնողական խորհուրդը կատարեց ծախսերի հաշվարկ ,որի արդյունքում որոշեցին հավաքել 4000 դրամ գումար էքսկուրսիան կազմակերպելու համար:
Տրանսպորտ- 1000դր.
Կինոդիտման տոմս-1000դր.
Մանկական սրճարան- 2000դր.

3.Լսեցին.- *Ընթացիկ հարցեր /կարգապահություն,ռեժիմ,հերթապահություն/*:

Դասղեկը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն պայուսակով, դասագրքերով և դպրոցական համազգեստով, ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն, պահեն ծնող-դասղեկ-աշակերտ կապը: Քննարկվեց ընթացիկ հարցեր, որոնք վերաբերվում էին դասագրքերի պահպանմանը, աշակերտների հիգիենիկ վիճակին:

Որոշեցին .
Որոշվեց ցուցաբերել ավելի շատ ուշադրություն և հետևողականություն, որպեսզի աշակերտները ներկայանան աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Ան. Կարդանյան
Քարտուղար՝ Ան. Մարտիրոսյան